ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՄՏՔԻ, ԽՂՃԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Մարինե Իսահակյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

Ազատության կարևոր դրսևորումներից մեկն այն է, որ ազատ մարդը իր գիտակցության «տիրակալն» է: Անգլիացի ականավոր փիլիսոփա Թ. Հոբսը գրում է. «Ազատ է այն մարդը, ում ոչինչ չի խոչընդոտում անելու իր ցանկացածը, քանի որ նա իր ֆիզիկական և մտավոր ունակություններով ի վիճակի է դա անելու»[1]: Մտքի, խղճի և կրոնի ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է: Խղճի ազատությունը մարդկային անհատականության «միջուկն» է, այլ կերպ ասած՝ «մարդ լինելու» իրավունքը, քանի որ աշխարհայացքի ազատ ընտրությունը զուգահեռաբար դիտվում է որպես ազատ քաղաքական ընտրության, իրավական ժողովրդավարության և սոցիալական պետության հիմք[2]:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների խղճի և դավանանքի ազատությունը օրենսդրորեն ամրագրված է: Խղճի և դավանանքի ազատությունը մարդկային էության բնութագրական հատկանիշներից մեկն է: Ազատորեն առաջնորդվելով իր խղճով և դավանելով իր նախընտրած համոզմունքները՝ յուրաքանչյուր անհատ կարողանում է լիարժեք ինքնիրացվել տվյալ հասարակությունում: Անկախ պետականության հռչակման և կայացման ժամանակաշրջանում կրոնի դերի վերագնահատումը ամրագրվեց ՀՀ 1995 թ. Սահմանադրության մեջ: ՀՀ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության հոդված 41-ում նշվում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք, որոնք կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Ազատազրկման դատապարտվածները, ինչպես և ՀՀ բոլոր քաղաքացիները, երաշխավորվում են մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքով: Անհատի բարոյական և իրավական ընտրության հիմնախնդիրը ընկած է խղճի և կրոնի ազատության պատմահրավական վերլուծությունների հիմքում: Առաջին իրավական ակտերը, որոնք վերաբերում են վերոնշյալ հիմնախնդրին, վկայում են, որ ի սկզբանե խղճի ազատությունը դիտարկվել է որպես հանդուրժողականության և կրոնի մասին ուսմունքի դրույթների մեկնաբանման ազատություն: Նման նորմեր պարունակում են 1598 թ. Ֆրանսիայում ընդունված Նանտի էդիկտում և 1689 թ. Մեծ Բրիտանիայում ընդունված «Կրոնի հանդուրժողականության մասին ակտում»:

Ներկա ժամանակաշրջանը բնութագրող դրական կողմերից է կրոնի ազատության իրավունքի իրականացման հնարավորությունն առանց խոչընդոտների ու սահմանափակումների: Սահմանափակումներ նախատեսված են միայն այն դեպքերում, երբ անհրաժեշտ է պաշտպանել հասարակական անվտանգությունն ու

[1] Տե՛ս **Т. Гобсс**, Левиафан или материя, форма и власть государства церковного и гражданского, Москва, 1991, т. 2, էջ 163 :
[2] Տե՛ս **С. Бурянов**, Свобода совести в Российской Федерации / специализированный доклад за 2011 год, էջ 7:

կարգուկանոնը, քաղաքացիների բարոյականությունը և առողջությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները: Իրավագիտության խոշոր տեսաբաններից Վ. Ներսեսյանցը կարծում է, որ խղճի և դավանանքի ազատությունը պատկանում է անձնական (անհատական) իրավունքների և ազատությունների թվին, որոնք պաշտպանում են մարդուն՝ որպես բանական և հոգևոր էակի, որպես ազատ անձի[1]: Խիղճը ներքին բարոյական գիտակցությունը, զգացողությունը կամ իմացությունն է այն բանի, թե ինչն է լավ կամ վատ, արդար կամ անարդար, ազնիվ կամ անազնիվ և այլն: Խիղճը որոշվում է բարոյական նորմերով, որոնցով առաջնորդվում է մարդը վարքագծի կոնկրետ տեսակ ընտրելիս[2]: Եթե մարդը վարվում է անարդար, ապա նա, որպես կանոն, կրում է բարոյական, երբեմն էլ՝ իրավական պատասխանատվություն: Որպես բարոյական գիտակցության կարևոր տարր' խիղճը մարդուն ուղղորդում է իր արարքներում: Այս ունակությունը մարդկային էության հիմնական հատկանիշներից է[3]: Բարոյական գնահատական տալով նախ իր, այնուհետև այլ անձանց վարքագծին՝ մարդն ընտրում է որոշակի վարքագծի տեսակ և համադրելով հասարակության մյուս անդամների վարքագծի հետ՝ կարողանում է տվյալ հասարակությունում ապրել և արարել:

Կարծում ենք, որ խղճի և կրոնի ազատության իրավունքի առկայությունը և իրացումը վկայում են իրավական, ժողովրդավարական պետության կայացման մասին, որը ենթադրում է խղճի և կրոնի ազատության ապահովումը մարդու և քաղաքացու համար և նպաստում է հասարակության կրոնահիրավական գիտելիքների զարգացմանը:

Կրոնը քրեակատարողական հիմնարկներում ավելի մեծ նշանակություն ունի, որը առաջին հերթին բխում է կրոնի հոգեթերապևտիկ գործառույթից, քանի որ կրոնական սփոփանքի առավել կարիք ունեն հասարակությունից մեկուսացման պայմաններում՝ ազատազրկման վայրերում, պահվող դատապարտյալները: Ազատազրկման դատապարտվածներն իրավունք ունեն դավանելու կամ չդավանելու ցանկացած կրոն, կարող են ազատորեն ընտրել, ունենալ և տարածել կրոնական կամ աթեիստական համոզմունքներ: Այդ իրավունքն իրականացվում է բացառապես կամավորության սկզբունքով՝ հաշվի առնելով պատիժը իրականացնող հիմնարկի տեսակը, միևնույն ժամանակ չխախտելով քրեակատարողական հիմնարկների ներքին կարգապահությունը, ինչպես նաև չսահմանափակելով այլ անձանց իրավունքները: Հասարակական գիտակցության մեջ պետական քաղաքականությունում կրոնի հանդեպ հայացքները վերանայվել են: Կրոնը հանդես է գալիս որպես մարդու վարքագծի կարգավորիչ՝ ելնելով համամարդկային բարոյական արժեքներից, բացահայտելով մարդու ներքին խնդիրները, բարոյական գիտակցության շեղումները: Վերջին տասնամյակում Հայաստանյաց Առաքելական եկեղեցու և պատիժներ կատարող հիմնարկների հարաբերությունները որակապես նոր փուլ են թևակոխել: Կրոնի արժեքային կողմնորոշումները որոշում են եկեղեցու կարևոր դերը պենիտենցիար հիմնարկների աշխատանքում ինչպես պատիժ կրող անձնաց նկատմամբ ներգործության միջոցների կիրառման արդյունավետության հարցում, այնպես էլ դատապարտյալների անձնական կարիքները բավարարելիս և արտա-

---

[1] Տե՛ս **Վ. Ներսեսյանց**, Общая теория права и государства, Москва, 1999, էջ 333-337:

[2] Տե՛ս **Պ. Դոզորցև**, Конституционно-правовые основы свободы совести в Росии // Российская юстиция, 1999, էջ 22:

[3] Տե՛ս **Պ. Դոզորցև**, Философско-правовые основы свободы совести в современной России, Москва, 1998, էջ 29-32:

քին աշխարհի հետ շփման հնարավորություն են ստեղծում: Իր գործառույթների խնդիրներով կրոնը քրեակատարողական հիմնարկների համար ավելի մեծ նշանակություն ունի, քան հասարակությունը: Կրոնական սփոփանքի առավել կարիք ունեն խարխլված հոգեկան կամ տհաճ, ծանր ներգործության ազդեցության ներքո գտնվող անձինք, որն ավելի բնութագրական է դատապարտյալներին:

Ընդ որում, առավելությունը միշտ տրվում է մարդու բարոյական զարգացմանը, բարոյականությանը՝ որպես հոգևորի հիմք: Մարդու նկատմամբ ներգործության մեթոդներով կրոնը առավել, քան որևէ այլ երևույթ, համապատասխանում է դատապարտյալների հետ աշխատանքի պենիտենցիար բնագավառի պահանջներին: Ազատազրկման վայրերում քրեական պատիժներ կրող անձանց նկատմամբ բարոյական ներգործությունը, կրոնական կյանքի զարգացումը պահանջում են այս ոլորտի իրավական, կազմակերպամեթոդական և բարոյահոգեբանական ապահովվածության հետագա կատարելագործում: Հայաստանյաց Առաքելական եկեղեցու գործունեությունը քրեակատարողական հիմնարկներում զարգացում է ապրել համեմատաբար վերջերս: Բայց այդ կարճ ժամանակահատվածում ազատազրկման վայրերում ձևավորվել են նոր հասարակական հարաբերություններ, որոնք կարելի է սահմանել որպես կրոնական և արտացոլում են դատապարտյալների խղճի և կրոնի ազատության իրավունքի իրականացումը:

Իրավաբանական գրականության մեջ դատապարտյալների կրոնի ազատության իրավունքի իրականացման գործընթացը բաժանվում է երեք հիմնական փուլերի. ա) քրեակատարողական հիմնարկի վարչակազմին՝ իր կրոնի ազատության իրավունքի իրականացման համար դիմելը, բ) կրոնի ազատության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և գ) իրավունքների պաշտպանությունը դրանց խախտման դեպքում[1]:

Կարծում ենք, որ կրոնական հարաբերությունների բնագավառում դատապարտյալներն իրենց իրավունքներն իրականացնելիս պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են հրահրել կրոնական թշնամանք, նվաստացնել անձի պատիվն ու արժանապատվությունը, վնաս պատճառել դատապարտյալների առողջությանը կամ իրականացնել այլ ոտնձգություններ նրանց իրավունքների դեմ, որոնք հիմք կհանդիսանան դատապարտյալների կողմից պատժի կրման սահմանված կարգը խախտելուն: Վերը թվարկվածը ամբողջությամբ վերաբերում է ոչ միայն դատապարտյալներին, այլև քրեակատարողական հիմնարկների աշխատակիցներին, ովքեր պարտավոր են այս բնագավառում իրենց պարտավորությունները կատարելիս չսահմանափակել դատապարտյալների իրավունքները, չխախտել նրանց հավասարության սկզբունքը, չհարկադրել կրոնական կամ աթեիստական գաղափարների ընդունման, չհրահրել թշնամանք դատապարտյալների միջև՝ ելնելով կրոնական պատկանելությունից կամ կրոնի նկատմամբ վերաբերմունքից:

Քրեակատարողական հիմնարկները կրոնի բնագավառում հարաբերությունների զարգացման համար ունեն հսկայական ներուժ: Վերջին ժամանակներս ազատազրկման վայրերում դատապարտյալների, հոգևորականների և քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի միջև հարաբերություններն ավելի կայուն են դարձել: Քրեակատարողական հիմնարկներում հնարավորինս ստեղծվում է հավա-

[1] Տե՛ս **Королев В.Н.** Проблемы реализации права осужденных на свободу вероисповедания. М., 1992, էջ 12-13:

սարակշռվածություն կրոնական արարողությունների (ծեսեր) և դատապարտյալների վարքագծի կանոնների միջև (կրոնական որևէ գործողություն չի կարող դիտվել պատժի կրման սահմանված կարգին չենթարկվելու արդարացում):

Կարծում ենք, որ հոգևոր կյանքը չի կարող խոչընդոտել պենիտենցիար հիմնարկների կանոնավոր գործունեությունը, կառավարման տեսակետից չի կարող պահանջել ֆինանսական ներդրում, դրանց գործնական իրականացումը չպետք է վնաս պատճառի դատապարտյալներին և վարչակազմին:

Դատապարտյալների խնդրանքով պատիժը կրելու վայրերում կարող են թույլատրվել անցկացնել կրոնական ծիսակատարություններ (մկրտություն, ամուսնություն, կրոնական գրականության ուսումնասիրություն և այլն), ինչպես նաև դատապարտյալները կարող են օգտվել պաշտամունքի առարկաներից և կրոնական գրականությունից: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմն այդ նպատակով առանձնացնում է համապատասխան տարածք (ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 91-րդ հոդված, 5-րդ մաս):Դատապարտյալի մասնակցությունը կրոնական արարողություններին չի ազատում նրան օրենքով սահմանված իր պարտականությունների կատարումից և պատասխանատվությունից դրանք խախտելու համար: Հոգևորականների այցելությունները թույլատրվում են նաև ազատազրկում կատարող փակ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող դատապարտյալներին: Այս կարևոր դրույթի իրավական նշանակությունը այն է, որ արտահայտում է սոցիալական վտանգավորության բարձր աստիճանով տարբերվող դատապարտյալների օրինական շահերը:

Կարծում ենք, որ դատապարտյալները, մասնակցելով կրոնական արարողություններին, կարող են գտնել քրիստոնեական բարոյական համակարգում արդեն առկա իրենց հուզող կյանքի հիմնական հարցերի պատասխանները, որոնց անհրաժեշտությունը սոցիալական մեկուսացման պայմաններում, որպես կանոն, ավելի է մեծանում: Անժխտելի է, որ ազատազրկման դատապարտվածի անձը պատժի կրման ընթացքում ենթարկվում է որոշակի լուրջ փոփոխությունների, որոնց շնորհիվ նրա համար առաջնային նշանակություն են ստանում անհատական արժեքները և ոչ համընդհանուրը, իսկ անձի սոցիալական էությունը բովանդակող արժեքները մղվում են երկրորդ պլան: Այս փաստը հիմնավորվում է ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական գիտնականների բազմաթիվ հետազոտություններում: Բարոյական խնդիրների վերաբերյալ տրված պարզունակ պատասխանները, բարոյական արժեքների հստակ չափանիշները, դրանց յուրահատուկ կարգը և ամբողջությունը կարելի է դասել կրոնական բարոյական ազդեցիկ կողմերի թվին: Դա առավել մեծ արժեք է ներկայացնում այն դատապարտյալների համար, ովքեր այլ անձանց հակադրում են իրենց ինքնամփոփ խմբակցությանը, ընդունում և գնահատում են միայն իրենց արժեքները, մշակում են ազատազրկման վայրերին յուրահատուկ վարքի կանոններ:

Մեր կարծիքով, եկեղեցու գործունեությունն ազատազրկման վայրերում հնարավոր է զարգացնել երկու ուղղություններով՝ դատապարտյալների կրոնական պահանջմունքների բավարարում և կրոնական ծեսերի միջոցով ընդհանուր մարդասիրական ներգործություն բոլոր դատապարտյալների նկատմամբ:

Կարծում ենք, որ դատապարտյալների դաստիարակության հարցում կարևոր նշանակություն ունի կրոնական ներգործության սոցիալ-մանկավարժական գործառույթը: Այն անձին հնարավորություն է ընձեռում հագեցնել հուզական և տեղեկատվական քաղցը, դատապարտյալի մոտ ձևավորել իրավահպատակ վարքագիծ:

Հստակ է, որ հասարակությունից մեկուսացման պայմաններում՝ ազատազրկման վայրերում, կրոնի ազդեցությունը ձեռք է բերում առավել կարևոր նշանակություն: Կրոնական դաստիարակության տարրերը նպաստում են ոչ միայն հանցավոր մտքերի չեզոքացմանը, այլև հանցագործի բարոյական մաքրմանն արատներից և վնասակար այլ սովորություններից:

Հատկանշական է, որ դատապարտյալի նկատմամբ կրոնի ընդհանուր մարդասիրական ներգործությունն ունի հսկայական օգտակար պոտենցիալ, որի իրագործումը հնարավոր է քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի և Հայաստանյաց Առաքելական եկեղեցու համագործակցությամբ:

Կարծում ենք, որ քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի պաշտոնատար անձանց և Հայաստանյաց Առաքելական եկեղեցու միջև փոխըմբռնումն ու փոխհամագործակցությունը, ինչպես նաև համագործակցությունը այլ կրոնական կազմակերպությունների հետ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում դատապարտյալների նկատմամբ, սերտորեն կապված է գործնական բազմաթիվ հարցերի լուծման հետ: Այս ամենը կյանքի կոչելու համար, մեր կարծիքով, սկզբում կողմերը, ովքեր նախապատրաստվում են փոխհամագործակցության, պետք է համատեղ պարզեն և համաձայնեցնեն այն կանոնները, որոնց շրջանակներում նրանք պետք է ծավալեն իրենց գործունեությունը: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, որը որոշել է հարաբերություններ զարգացնել այլ կրոնական կազմակերպությունների հետ, պետք է ընդհանուր գծերով ծանոթանա նրանց հավատի հիմքերին, կրոնական ավանդույթներին, սովորույթներին, ծեսերին և այլն: Բնականաբար, նման հարաբերություններ կարող են ծագել միմիայն պաշտոնապես գրանցված կազմակերպությունների հետ: Մյուս կողմից, կրոնական կազմակերպությունները պետք է ծանոթանան քրեակատարողական հիմնարկի ներքին կարգապահության, ինչպես նաև ազատազրկման վայրեր քաղաքացիական անձանց այցելությունների կանոններին:

Կարծում ենք, որ քրեակատարողական հիմնարկներ մուտք գործող հոգևորականների հետ առնչվող մեկ այլ կարևոր խնդիր է կրոնական ծեսերի համար համապատասխան տարածքի ընտրությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկներում առանձնացնել համապատասխան հարմարություններով կահավորված սենյակներ կամ կառուցել փոքրիկ մատուռ, աղոթարան, կամ, ինչո՞ւ չէ, նաև ոչ մեծ եկեղեցի: Նման կառույցները մշտապես կարող են գործել կրոնական կազմակերպությունների հովանու ներքո: Նման կառույցները, անշուշտ, հոգեթերապևտիկ ազդեցություն կարող են ունենալ ազատազրկման դատապարտված անձանց հոգեցունց վիճակը մեղմելու հարցում և ի վերջո զղջման գործընթացի խթան դառնալ:

Ցանկալի է քրեակատարողական հիմնարկներում այդ նպատակի համար առանձնացնել որոշակի պաշտոնատար անձանց, ովքեր կստանձնեն կրոնական կազմակերպությունների հետ աշխատելու պարտականություն (հանդիպումներ, ուղեկցում հիմնարկի տարածքում, խնդրին առնչվող այլ հարցերի կարգավորում և այլն), քանի որ համագործակցությունը այս հարցի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի կողմից լուրջ մոտեցում է պահանջում:

Կարծում ենք, որ եկեղեցու և քրեակատարողական համակարգի միջև համագործակցության ամրապնդման և արդյունավետության բարձրացման նպատակով նպատակահարմար կլինի քրեակատարողական հիմնարկներին կցել այդ մարմիններն սպասարկող քահանաներ, ինչպես օրինակ՝ կապելանները՝ կաթոլիկ քահա-

նանները (ազատազրկման վայրերի հոգևորականներ, ովքեր գործադիր իշխանության և եկեղեցու ղեկավարության միջև եղած պայմանագրային հիմունքներով գտնվում են պետական ծառայության մեջ): Այստեղ կարելի է օգտագործել Արևելյան Եվրոպայի երկրների փորձը: Այսպես, Գերմանիայում կապելաններն ընդգրկված են բանտի վարչակազմի մեջ, իրենց մոտ կրում են բանտի խցերի բանալիները և դատապարտյալների խնդրանքով ցանկացած պահի կարող են մեկուսի հանդիպել նրանց հետ: Մեծ Բրիտանիայում ազատազրկման վայրերի կապելանները պատրաստվում են հատուկ մասնագիտացված հոգևոր ուսումնական հաստատություններում, որոնց ունկնդիրները որոշ ժամանակ բնակվում են դատապարտյալի հետ: Վերջինիս նպատակը հասարակությունից մեկուսացման պայմաններում յուրօրինակ աշխարհընկալման ըմբռնումն է[1]:

Սակայն, մեր կարծիքով, բազմաթիվ հարցեր մնում են խնդրահարույց: Պարզաբանման են ենթակա, օրինակ, թե ինչպես, ինչ ձևով և եղանակներով պետք է ընթանան դատապարտյալներ-եկեղեցի-քրեակատարողական հիմնարկների հասարակական հարաբերությունները, և ինչպես կարելի է կարգավորել իրավական, կազմակերպական հարցերն այս բնագավառում:

Դատապարտյալների իրավական դրությունը կրոնական հարաբերությունների բնագավառում, մեր կարծիքով, հանգում է հետևյալին՝ յուրաքանչյուր դատապարտյալ իրավունք ունի անձամբ կամ իր համախոհների հետ դավանել ցանկացած կրոն՝ իհարկե բանականության սահմաններում՝ ելնելով քրեակատարողական հիմնարկի հնարավորություններից, բավարարել իր կրոնական պահանջմունքները, մասնակցել կրոնական արարողություններին: Ընդունելով և գնահատելով կրոնի և եկեղեցու դերը պենիտենցիար հիմնարկների գործունեության մեջ՝ մենք այն չենք համարում դատապարտյալների նկատմամբ ներգործության միակ և բացարձակ միջոց: Դատապարտյալների նկատմամբ կիրառվող ներգործության միջոցների համակարգը խիստ բազմազան է և ապացուցել է իր արդյունավետությունը:

Միաժամանակ, այլ տեսանկյունից պետք է հավաստել, որ ազատազրկման վայրերում խղճի և դավանանքի ազատության իրավունքի ապահովումն անհրաժեշտություն է, և երբեք նշանակություն չունի՝ քրեակատարողական հիմնարկներում կա՞ն հավատացյալներ, թե՞ ոչ: Նույնիսկ մեկ հավատացյալ դատապարտյալի առկայության պարագայում պետք է ապահովել նրա այդ իրավունքի իրականացումը՝ օրենքին համապատասխան և դրանով նախատեսված սահմաններում: Դատապարտյալները կարող են ստանալ, ձեռք բերել և օգտվել պաշտամունքի առարկաներից և կրոնական գրականությունից (դրանցից չի կարելի օգտվել շահադիտական նպատակներով, այդ առարկաները չեն կարող պատրաստված լինել թանկարժեք մետաղներից կամ քարերից, ծակող կամ կտրող առարկաներից կամ ներկայացնել պատմամշակութային արժեք):

Չէինք կարող չանդրադառնալ նաև վերջին շրջանում մեր երկրում տարածում ստացած աղանդների վտանգավոր գործունեությանը, որը կարող է իր բացասական ազդեցությունն ունենալ քրեակատարողական հիմնարկների գործունեության վրա: Այստեղ ևս կարևորվում է Հայաստանյաց Առաքելական եկեղեցու և քրեակատարողական հիմնարկների համագործակցությունը: Մեր եկեղեցին պայքարում է նման կեղծ ուսմունքների և աղանդների դեմ, որոնք կարող են գրավել մարդկային

[1] Տե՛ս **Байдаков Г.П.** и др. Деятельность религозных организаций в исправительных учреждениях. М., 1995, էջ 33:

միտքն ու հոգին, քարոզել բռնություն, ժխտել ընտանիքը և սոցիալական այլ արժեքներ:

Կարծում ենք, որ եթե ներկայումս աղանդները դեռևս մուտք չեն գործել քրեակատարողական հիմնարկներ, ապա ապագայում դրա վտանգը չի բացառվում: Աղանդներն իրենցից հոգևոր վտանգավորություն են ներկայացնում, որոնք սպառնում են այն մարդկանց, ովքեր այս գորշ ժամանակաշրջանում փրկությունը տեսնում են աղանդավորական կառույցներին ներգրավվելով: Այդ պատճառով անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել ԶԼՄ-ներով կրոնական ատելության, թշնամության և խտրականության, կրոնական զգացմունքներն ու մարդկային արժանապատվությունը նսեմացնող կոչեր պարունակող հոդվածներն ու ելույթները բացառելու համար:

Կարծում ենք, որ մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքի իրացման նպատակով կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ փոխհամագործակցության ամրապնդման ուղղությամբ աշխատանքները պետք է շարունակել, պետք է կրոնական կազմակերպությունների ներուժն օգտագործել քրեական պատիժ կրած անձանց շրջանում կրկնահանցագործությունների կանխարգելման գործում: Կարևոր է նաև շարունակել աշխատանքը քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց համար վերականգնողական կենտրոնների ընդլայնման ուղղությամբ:

Եզրափակելով պետք է փաստել, որ կրոնական հարաբերությունների սկզբունքները և ընդհանուր դրույթները, այս բնագավառում քրեակատարողական հիմնարկների համար ծագող հարաբերությունների իրականացման կարգն ու պայմանները և նման բազմաթիվ խնդիրների լուծումը հնարավոր են քրեակատարողական համակարգի աշխատողների, Հայաստանյաց Առաքելական եկեղեցու, ինչպես նաև գիտության ներկայացուցիչների համատեղ ջանքերով միայն: Պետք է գիտակցել, որ դատապարտյալների բարոյահոգեբանական դաստիարակության գործընթացն ուղղված է հաղթահարելու նրանց մոտ ձևավորված՝ հասարակությանը խորթ բարոյական հայացքները և համոզմունքները, պետք է ձևավորել բարոյական գիտակցություն, զգացմունքներ, վարք և դաստիարակել որպես լիարժեք քաղաքացի: Այդ պատճառով քրեակատարողական հիմնարկների վարչակազմերը պետք է օգտագործեն Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հոգևոր դաստիարակության և խնամակալության փորձը:

СВОБОДА МЫСЛИ, СОВЕСТИ И ВЕРОИСПОВЕДАНИЯ ЗАКЛЮЧЕННЫХ В УГОЛОВНО-ИСПОЛНИТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ

Марине Исаакян
Соискатель Кафедры уголовного права ЕГУ

Приговоренные к лишению свободы, как и все граждане РА, наделены свободой мысли, совести и вероисповедания. Наличие свободы совести и вероисповедания и её реализация свидетельствуют о становлении правового, демократического государства, что предполагает обеспечение свободы совести и вероисповедания для человека и гражданина и способствует развитию

религиозно-правового уровня общества. В условиях лишения свободы обеспечение свободы совести и вероисповедания является необходимостью, а процесс морально-психологического воспитания заключенных должен быть направлен на формирование преодоления в них чуждых обществу морали и убеждений, и что, самое главное: формируя моральное сознание, воспитывать их как полноправных членов общества, предотвращая, таким образом, рецидивы противоправных действий в будущем.

THE PRISON FREEDOM OF THOUGHT, CONSCIENCE AND RELIGION OF THE CONVICTED PERSONS IN PRISONS

Marine Isahakyan
PhD student of the YSU Chair of Criminal Law

All citizens of the RA as the convicted persons are guaranteed by the freedom of thought, conscience and religion.The presence of freedom of thought, conscience and religion states about the lawful and democratic state, the latter is supposed to provide a citizen with the freedom of thought and conscience, at the same time it contributes the development of the legal-religions level. In prisons the freedom of thought, conscience and religion is a necessity and the moral-psychlogical education of the persons should be implemented to overcome the moral attitudes and beliefs that are unacceptable for society the most important thing is to upbring the competent citizen forming the moral conscience, later preventing the double illegal conducts.

Բանալի բառեր *–դատապարտյալներ, մտքի, խղճի և կրոնի ազատություն, քրեակատարողական հիմնարկ, հասարակությունից մեկուսացման պայմաններ*
Ключевые слова: *заключенные, свобода мысли, совести и вероисповедания, изоляции от общества*
Key words: *convicted persons, freedom of thought, conscience and religion, prison conditions of isolation from society*